

Հանրային կառավարման ըմբռումը. տեսական և գործնական մոտեցումները

ՀՏԴ 338.2

Հարությունյան Հասմիկ Մ.

Տնտեսագիտության թեկնածու, ավագ դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Կառավարման ամբիոն (Երևան, ՀՀ)

h.harutyunyan@live.ru

Հանգուցաբառեր՝ հանրային կառավարում, պետական կառավարում, կառավարման մարմին, ժողովրդավարություն, հասարակություն, քաղաքականություն, վարչարարություն:

Понятие публичного управления: теоретические и практические подходы

Арутюнян Асмик М.

к.э.н., старший преподаватель.

Армянский государственный экономический университет, кафедра управления, (Ереван, РА)

h.harutyunyan@live.ru

Аннотация. Уточнение термина “публичное управление” было и остается одним из наиболее актуальной теоретической и практической задачей в науке управления. Научнопрактические взгляды относительно публичного управления расходятся. Некоторые считают публичное управление междисциплинарной дисциплиной, другие сравнительно молодой наукой, подчеркивая ее значимость в системе знаний. В настоящее время основы публичного управления как самостоятельной науки укрепляются.

И наука, и сфера деятельности публичного управления развивались и состоялись одновременно. Существенно изменились содержание публичного управления и его восприятие в связи со становлением демократии, диверсификацией публичных институтов, с ростом общественных потребностей, углублением разногласий между различными группами общества, доступностью информации, увеличением рисков.

Именно по этой причине, в поисках новой модели публичного управления неизбежно объединение всех компонентов, которые доказали свою значимость в процессе развития публичного управления.

Ключевые слова: публичное управление, государственное управление, орган управления, демократия, общество, политика, администрирование

Conception of Public Governance. Theoretical and Practical Approaches

Harutyunyan Hasmik M.

PhD, Senior Lecturer,

Armenian State University of Economics, Chair of Management (Yerevan, RA)

h.harutyunyan@live.ru

Abstract. Clarification of the term "public governance" has been and still remains one of the most actual theoretical and practical issues in the management science. The academic and practical instances are of different opinions in regard to public governance. Some consider public governance to be an interdisciplinary discipline, while others consider it to be a relatively young science, emphasizing its role in the knowledge system. At present, the foundations of public governance as standalone science are continuously strengthened.

Both the science and the field of activity of the public governance have developed and came into being simultaneously. Presently, the content of public governance and its perception have changed considerably due to establishment of democracy, diversification of public institutions, increase of the public demand, deepening of disagreements between the different groups of society, access to information, increase of risks.

This is the reason that in the search of a new model of public governance, the integration of all the components that have proven their importance during development and formation of the public governance is inevitable.

Keywords: public governance, state administration, management body, democracy, society, politics, administration.

«Հանրային կառավարում» եզրույթի հստակեցումը եղել և մնում է կառավարման գիտության առավել արդիական տեսական և գործնական խնդիրներից մեկը: Հանրային կառավարման վերաբերյալ գիտագործնական շրջանակները տարակարծիք են. ոմանք գտնում են, որ հանրային կառավարումը միջգիտական

դիսցիպլին է, քանի որ իր մեջ ներառում է քաղաքագիտության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, իրավագիտության, մենեջմենթի տարրեր, օգտագործում է դրանց հետազոտական գործիքները, ուստի այն բոլոր գիտությունների ձեռքբերումն է և բաղկացուցիչ մասը: Գիտնականների մյուս մասը, որոնց թիվը գնալով

մեծանում է, չանտեսելով վերը նշված գիտությունների դերը, հանրային կառավարման գիտությունը համարում է համեմատաբար երիտասարդ գիտություն՝ կարևորելով դրա դերը իմացության համակարգում: Վերջիններիս համար գոյություն չունի տեսության և պրակտիկայի հստակ տարանջատում, քանի որ գիտական հետազոտությունների արդյունքները, ինչպիսիք են «Հանրային դաշինքի տեսությունը», «Բյուրոկրատիայի տեսությունը», «Նոր հանրային կառավարումը», «Պետական ցանցային կառավարման հայեցակարգը», «Լավ կառավարումը» կիրառվում են հանրային կառավարման գործընթացում:

Ներկայումս հանրային կառավարման՝ որպես ինքնուրույն գիտության հիմքերը գնալով ամրապնդվում են: Առանձնացվել և հստակեցվել են ուսումնասիրության ոլորտները: Դրանք են պետական և տեղական կառավարման ու ինքնակառավարման մարմինների գործունեությունը, այդ թվում հանրային ծառայությունը, քաղաքացիական հասարակությունը: Հանրային կառավարման գիտության թիրախում են կառավարման մարմինների ռազմավարությունները, բիզնեսի-պետական ու տեղական հատվածների համագործակցության և դրանց արդյունավետության բարձրացման խնդիրները, տարաբնույթ պետական ծրագրերի վերլուծություններն ու քանակական-որակական գնահատումները և այլն: Սոցիալական համահարթեցման, հանրային բարիքի բաշխման, հասարակության պահանջունքների բավարարման, հանրային շահերի պաշտպանության ու հանրային կյանքի յուրաքանչյուր խնդրի կարգավորման վերաբերյալ արդյունավետ կառավարչական որոշումների ընդունումը հանրային կառավարման գլխավոր նպատակներից է, իսկ գիտության՝ ուսումնասիրության հիմնական առարկան:

Այժմ փորձենք բացահայտել հանրային կառավարման էությունը և դրա կարևորությունը հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ:

Ակնհայտ է, որ հանրային կառավարման էությունը հասկանալու համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել և՛ որպես գիտություն, և՛ որպես գործունեության ոլորտ: Թեպետ ներկայումս դրանք բավականաչափ հեռու են միմյանցից, սակայն վերջիններիս միջև կապի հաստատումը հնարավորություն կտա վերափոխելու հանրային կառավարման զարգացման միտումները՝ դրանք վերածելով հասարակության գոյության և կենսագործունեության ապահովման միջոցի ու զարգացման հնարավորության:

Հանրային կառավարումը այնպիսի ոլորտ է, որտեղ ամենաշատն է անհրաժեշտ գիտությունը առավելագույնս մոտեցնել իրականությանը [18]:

Իմացության համակարգում գիտության նշանակությունը ավելի արժևորելու համար կարելի է միայն հավելել մեկ այլ հայտնի ամերիկացի տեսաբան Ռ. Դենհարդի «Հանրային կազմակերպության տեսություններ» աշխատությունում ներկայացված հետևյալ միտքը. «Որպեսզի նշանակալից գաղափարներ ծնվեն, մենք ինքներս պատշաճ չափով պետք է գիտակցենք տեսության նշանակությունը մեր ամենօրյա կյանքում» [2, էջ 7]: Նույնիսկ իր աշխատանքի նպատակը տեսաբանը համարել է տեսության և պրակտիկայի, վերլուծության և գործունեության միավորումը:

Հանրային կառավարման՝ որպես գիտության ձևավորման և հանրային կառավարման հիմնադրույթների կիրառման հիմքերը անգուսաքսոնական են, քանի որ բյուրոկրատիայի գոյությունը խոչընդոտեց եվրոպական պետություններում հասարակական գիտությունների ուսումնասիրությունների արդյունքների հանրայնացմանը և կիրառմանը: ԱՄՆ-ի՝ որպես պետության ձևավորման հիմքը ոչ թե բյուրոկրատիան էր, այլ ժողովրդավարությունը: Այստեղ պետության կառավարումը հիմնվեց ազատության, ժողովրդավարության, թափանցիկության սկզբունքների վրա՝ նպաստելով հանրային կառավարման և՛ որպես գիտության, և՛ որպես գործունեության ոլորտի զարգացմանը՝ բյուրոկրատիայի ձևավորմանն ու վարչական կառավարմանը զուգընթաց:

Հանրային կառավարման գիտական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե տեսաբանները հանրային կառավարումը դիտարկել են որպես վարչական մարմինների գործունեություն: Եվ քանի որ գիտության ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը բխում էր հանրային կառավարման համակարգը բարեփոխելու և հանրային կառավարման մարմինների գործունեությունը ժողովրդավարական սկզբունքներով իրականացնելու պահանջից, ուստի գիտական ուսումնասիրությունների թիրախը դարձան պետական և տեղական վարչակազմերը:

ԱՄՆ-ի 28-րդ նախագահ, պետականագետ, հանրային կառավարման գիտության հիմնադիր Թոմաս Վուդրո Ուիլսոնն առաջինն էր, ով «Վարչարարության ուսումնասիրությունը», «Հանրային կառավարման գիտությունը» աշխատություններով հիմք դրեց հանրային կառավարման գիտության զարգացմանը: Հեղինակը դրանցում հիմնավորել է հանրային կառավարումը գիտական հիմքերի վրա դնելու անհրաժեշտությունը: Ուիլսոնի հետազոտությունների նպատակը հանրային կառավարման

մարմինների, պետական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների բացահայտումն էր, դրանց հիմքերի ձևավորումը և զարգացման հնարավորությունների ստեղծումը: Ինչպես ժամանակի շատ տեսաբաններ ու քաղաքական գործիչներ, նա իր աշխատանքներում նույնպես կարևորում էր քաղաքականության և վարչարարության տարանջատումը՝ որպես գործունեության ինքնուրույն և առանձին ոլորտներ: Նա հանրային վարչարարությունը դիտարկում էր որպես մասնագիտական գործունեություն, որն իրականացվում է պետական և տեղական ծառայողների կողմից, իրավական ակտերի ընդունման և իրագործման միջոցով: Ըստ հեղինակի՝ վարչարարությունը ուղղվում է հանրային կառավարման մարմինների քաղաքական ծրագրերի իրագործմանը և ամբողջականացնում հանրային կառավարման գործընթացը: Ուիլսոնը հանրային կառավարումը ներկայացրել է որպես իրավունքի մանրամասն և համակարգային կիրառություն [17, էջեր 197-222]:

Հանրային կառավարման գիտության զարգացման մեջ հասարակության, տնտեսության, ինչպես նաև ռացիոնալ բյուրոկրատիայի վերաբերյալ իր տեսական հայացքներով մեծ ներդրում է ունեցել նաև գերմանացի սոցիոլոգ, տեսաբան, փիլիսոփա Մաքս Վեբերը: Ընդհանրացնելով նրա տեսակետները՝ կարելի է փաստել. Վեբերը համոզված էր, որ ռացիոնալ կառավարումը և յուրաքանչյուր կազմակերպության գործունեության արդյունավետությունը հնարավոր է ապահովել միայն լեգետիմ իշխանության և բյուրոկրատական կառուցվածքների միջոցով, որոնք կիրառելի են հասարակության գործունեության տարբեր ոլորտներում: Վեբերը նույնիսկ պնդում էր, որ մարդկության ապագան և զարգացումը հնարավոր է միայն բյուրոկրատական կարգերի գործարկման միջոցով: Նա կարծում էր, որ կգտնվեն խարիզմատիկ առաջնորդներ, ի դեմս՝ վարչարարների, ովքեր էլ կստեղծեն կառավարման ռացիոնալ համակարգեր՝ նպաստելով հասարակության առաջընթացին և զարգացմանը: Չանտեսելով ընտրովի մարմիններին՝ Վեբերը համոզմունք էր հայտնում, որ իրենց արհեստավարժությամբ վերջիններս զիջելու են նշանակովի պաշտոնյաներին և ժամանակի ընթացքում դուրս են մնալու պետության կառավարմանը մասնակցելու առաքելությունից՝ իրենց տեղը զիջելով բյուրոկրոտ-վարչարարներին [7, էջեր 644-707; 16], կարծես սրանով իսկ բացառելով հասարակության դերն ու մասնակցությունը պետության կառավարմանը:

Ուիլսոն-վեբերյան տեսակետները անվերապահորեն կարելի է համարել արդյունաբերական

հասարակության կառավարման հիմքը, որոնք մինչ օրս էլ անգնահատելի են կառավարման գիտության մեջ, սակայն բյուրոկրատիայի բացարձակեցումը մեծ քննադատության արժանացավ գիտական շրջանակներում, որը հիմնավորվեց առավելապես առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այն պայմանավորված էր կառավարման մարմինների կողմից ժամանակի հասարակության խնդիրները լուծելու սահմանափակ հնարավորությամբ: Հետարդյունաբերական շրջանում կառավարման դիտակետը դարձան մարդը և մարդկային հարաբերությունները: Համակարգակենտրոն կառավարմանը փոխարինեց անհատակենտրոն կառավարումը, աստիճանակարգային կառավարմանը՝ գործընկերային և մասնակցային կառավարումը [4, էջեր 88-98]:

1949 թ. ամերիկացի քաղաքագետ, հանրային կառավարման տեսաբան Դուայթ Ուալդոն առաջինն էր, ով ձևակերպեց «հանրային կառավարում»-ը և այն հակադրեց հանրային վարչարարությանը: Նա պնդում էր, որ հանրային վարչարարությունը իրեն սպառել է, և այս տեսանկյունից հանրային կառավարման խնդիրների լուծումը սկսել է կրել զուտ տեխնիկական բնույթ: Ըստ Ուալդոյի՝ հանրային կառավարումը պետք է ներառի թե՛ վարչարարության արդյունավետության, և թե՛ քաղաքական ժողովրդավարության դրույթները: Վարչարարության և քաղաքականության առանձնացումը հարաբերական է, ու ժամանակին դրանց տարանջատումը իշխանության լիազորությունների ու գործառնությունների առանձնացման նպատակ է հետապնդել: Ըստ Ուալդոյի՝ անկախ այն հանգամանքից քաղաքականությունն ու վարչարարությունը միասնական են՝ թե ոչ, ժողովրդավարության շրջանակներում հանրային գործերի կառավարումը պետք է միշտ հետևի ժողովրդավարական նորմերին և սկզբունքներին, իսկ վարչակազմի նպատակը պետք է լինի հանրությանը ծառայելը [18; 8]:

Հետպատերազմյան տնտեսական ճգնաժամերը և զարգացած տնտեսությամբ երկրներում վարչակազմերի կողմից դրանք լուծելու անկարողությունը մեծացրին հանրության անվստահությունը բյուրոկրատական կառավարման համակարգի նկատմամբ: Հանրային կառավարման գործընթացի արդիականացման և կառավարման կառուցակարգերի կատարելագործման ուղղությամբ գիտական հանրության կողմից գործադրված ջանքերի արդյունքը «Նոր հանրային կառավարման» մոդելի ստեղծումն էր: Այն պետք է ուղղվեր հանրային կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը:

Նոր հանրային կառավարման հիմնական նպատակը ոչ միայն արդյունավետ կառավարումն է, այլև վարչական մարմինների՝

հանրությանը ծառայելը, որով էլ այն տարբերվում է պետական կառավարումից կամ հանրային վարչարարությունից [6, էջեր 94-95]:

ԱՄՆ-ի քաղաքական գործիչ Դ. Ռոզենբլյունը տվել է հետևյալ բնորոշումը. «Հանրային կառավարումը կառավարչական, իրավական և քաղաքական գործառնությունների կիրառումն է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության կենսագործմամբ՝ հասարակությանն ամբողջությամբ կամ դրա առանձին հատվածներին ծառայություն մատուցելու նպատակով» [15, էջ 4]:

Այդպիսի աստիճանաբար տարածվեցին և հասարակության կողմից ընդունվեցին հանրային կառավարման ոլորտում «հետբյուրոկրատական կազմակերպությունից»՝ հօգուտ գործընկերային հորիզոնական հարաբերությունների, կոոպերացիայի, կառավարման դասական աստիճանակարգային կառուցվածքից հրաժարման, «հաստատության տրամաբանությունից»՝ «սպասարկման տրամաբանությանն» անցման գաղափարները [9, էջեր 29-30]:

Ամերիկացի մի խումբ գիտնականներ, հակադրվելով վերերյան տեսությանը, նույնպես նշել են կառավարման նորացման անհրաժեշտությունը: Նրանց կարծիքով հանրային կառավարումը պետք է հիմնվի քաղաքացիների իրավունքների ընդլայնման, հանրային վերահսկողության մեծացման, պետության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների քանակի մեծացման և որակի բարձրացման տրամաբանություն վրա [10, էջ 230]:

Նոր հանրային կառավարման գիտական դրույթների կիրառումը բացահայտեց բյուրոկրատական համակարգի հակասությունները, հնարավորություն տվեց հասարակությանը որոշակիություն ցուցաբերել, նոր շունչ տվեց հանրային կառավարման համակարգին: «Նոր հանրային կառավարումը» հանրային կառավարման ոլորտ ներմուծեց գործարարության մեջ իրենց հաջողություններն ամրագրած բազմաթիվ սկզբունքներ, մեթոդներ, գործիքներ, որոնք պետք է նպաստեին հանրային նպատակների արդյունավետ իրագործմանը: Հանրային կառավարման ոլորտում հետազոտողների բարեփոխումների թիրախը դարձան պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների միջև կապերը, կոմունիկացիաները, փոխհարաբերությունները, քանի որ հենց այստեղ էին ընդունվում հիմնական կառավարչական որոշումները:

Այնուամենայնիվ, երկարաժամկետ կտրվածքով, նոր հանրային կառավարման մոդելի ներդրումը և դրա դրույթների կիրառությունը, մասնավորապես անգլոսաքսոնական երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Նոր Զելանդիա, Կանադա), էական ազդեցություն

չունեցան պետությունների ռազմավարական ծրագրերի վրա, չփոխեցին պետական քաղաքականության ընթացքը և չբարեփոխեցին դրանք: Հակառակը, իշխանության ինստիտուցիոնալ միասնության սկզբունքը որոշ դեպքերում խոչընդոտում էր թե՛ հասարակական նախաձեռնություններին, թե՛ պետական և մունիցիպալ մարմինների գործունեությանը՝ պայմանավորված վարչարարության և քաղաքականության անհամապատասխանությամբ:

Պատճառն այն էր, որ հանրային կառավարման մեջ մենեջմենթի դրույթների ներկրումը շոշափում էր միայն վարչական մարմինների արդյունավետ գործունեության կազմակերպական խնդիրները՝ դուրս թողնելով հանրային կառավարման գործընթացում ռազմավարության մշակումն ու դրա ապահովումը, ընդհանուր առմամբ հանրային քաղաքականությունը:

Պետք է նշել, որ նմանատիպ բազմավեկտոր հանրային կառավարումը հանգեցնում է սոցիալական անհամերաշխության, ռեսուրսների ոչ նպատակային օգտագործման, անարդյունավետության, ուստի անհրաժեշտ է դրանում ապահովել քաղաքականության և վարչարարության ամբողջականությունն ու միասնությունը: Քաղաքացիական հասարակության զարգացումը և ժողովրդավարության սկզբունքների կիրառման շրջանակների մեծացման անհրաժեշտությունը մերժեցին քաղաքականության և վարչարարության ինքնուրույն «ինքնահաստատումը»:

Քաղաքականությունը՝ հանրային նպատակների սահմանման, իսկ վարչարարությունը՝ դրա ապահովման միջոց է, և հանրային կառավարման մեջ դրանց միասնությունը անքննարկելի է:

Այսպիսով, հանրային կառավարման վերաբերյալ պատկերացումը ամբողջականանում է ոչ միայն հանրային կառավարման մեջ կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման և վերջիններիս կողմից հանրությանը ծառայելու գաղափարի ներմուծմամբ, այլ՝ հանրային կառավարման մեջ քաղաքականության դերի գնահատմամբ:

Ինչպես ընդգծել է Դոնալդ Կետլը. հանրային կառավարման վերափոխումների արդյունքում առաջացած խնդիրներին տալ գնահատականներ առանց քաղաքական գործոնները հաշվի առնելու՝ անհնար է [13, էջեր 220-221]:

«Քաղաքականություն-վարչարարություն» երկվության գաղափարը ներկայումս կորցրել է իր արդիականությունը: Հանրային կառավարման գործընթացում «քաղաքականություն-վարչարարություն» միասնության լեգետիմությունն ու արդյունավետությունն են ամբողջապես բացահայտում հանրային կառավարման բովանդակությունը:

Քաղաքականությունը քաղաքական կազմակերպությունների և մարդկանց խմբերի գործունեությունն է՝ սեփական ու մարդկանց բարեկեցության ապահովման նպատակով հանրային ռեսուրսները տնօրինելու, իշխանության ինստիտուտների միջոցով հասարակության համար պարտադիր որոշումներ ընդունելու և դրանց իրագործումն ապահովելու համար [3, էջ 9]:

Քաղաքականությունը գործընթաց է, որի միջոցով հասարակությունն ընտրում է իրեն կարգավորող կանոնները [1, էջ 121]:

Քաղաքականության մեկնաբանությունների բազմատեսակության մեջ պարտադիր դիտարկվում է մի կարևոր բաղադրիչ՝ այս գործընթացին քաղաքացիների մասնակցությունը տարբեր ինստիտուտների միջոցով:

ՄԱԿ-ի փորձագետների բնորոշմամբ հանրային կառավարումը երկրի գործերի կառավարման նպատակով քաղաքական, տնտեսական և վարչական լիազորությունների իրականացում է, այն նաև կառուցակարգերի, գործընթացների, փոխհարաբերությունների և ինստիտուտների համալիր է, որոնց միջոցով քաղաքացիներն արտահայտում են իրենց պահանջմունքները, իրացնում են իրենց իրավունքներն ու շահերը, կարգավորում են տարածայնությունները: Հանրային կառավարումը կարող է իրականացվել բոլոր այն մեթոդներով, որոնք հասարակությունն օգտագործում է իր իշխանական լիազորությունների բաշխման, պետական միջոցների կառավարման, ինչպես նաև ծագող խնդիրների կարգավորման համար [14, էջ 9]:

Ըստ առավել տարածված մոտեցման՝ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ամբողջություն: Հանրային կառավարման էության նման մեկնաբանությունը անհիմն չէ, սակայն թերի է: Այդ կատեգորիայի բովանդակությունն ավելի լայն ու տարողունակ է, քան «պետական կառավարումը», և որպես երևույթ, հանրային կառավարումը բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումը էվոյուցիոն զարգացման շնորհիվ վերաճել է հանրային կառավարման [5, էջ 12]:

Պարզ է, որ հանրային կառավարման առաքելության իրագործումն անհնար է առանց պետության և հասարակության երկկողմ, հավասար և անմնացորդ մասնակցության ու փոխադարձ վստահության: Հանրային կառավարումը հասարակության վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող սոսկ կառավարչական ներգործություն չէ: Այն ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ պետական և

տեղական իշխանության կրողները ընդունում են այնպիսի որոշումներ, որոնք նպաստում են պետության՝ որպես ամբողջական կառույցի գոյությանն ու պահպանմանը, մյուս կողմից՝ հասարակությունը, ելնելով իր պահանջմունքներից, պարտադրում է իշխանության մարմիններին ձևավորել իրավական, տնտեսական, քաղաքական, սոցիալական այնպիսի կայուն միջավայր, որտեղ առավելագույնս կրավարարվեն հանրային պահանջմունքները և կապաշտպանվեն հանրային շահերը. սա է պետության առաքելության հիմքը:

Այսպիսով, հանրային կառավարման համակարգն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները և ամբողջ հասարակությունը, որոնք կառավարման տարբեր մակարդակներում և հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում պատասխանատու են հանրային քաղաքականության մշակման, դրա իրագործման, արդյունքում՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համար կամ մասնակցում են դրանց:

Հանրային կառավարման ինստիտուցիոնալ շրջանակներում սահմանվում են հանրային քաղաքականության ուղեմիջերը և իրականացվում ռազմավարական ծրագրերը: Այն նաև հարաբերությունների համակարգ է, որի միջոցով արդյունավետ կառավարվում են հանրային ռեսուրսները, բաշխվում են հանրային բարիքները, լուծվում են հասարակության առջև ծառայած խնդիրները:

Ընդհանրացնելով՝ պետք է հաստատել, որ **հանրային կառավարումը կառավարման օբյեկտի՝ հասարակության, հասարակական հարաբերությունների, հանրային գործընթացների և դրա մասնակիցների վրա հանրային իշխանության կիրառումն է, որի կրողներն են պետական և տեղական իշխանության մարմինները, նրանց կողմից լիազորված մարմինները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները և առանձին քաղաքացիները:** Վերջիններս ժողովրդավարական հասարակարգում հանդես են գալիս որպես հանրային իշխանության առաջնային սուբյեկտներ:

Պետությունների զարգացման ներկա տեմպերը, հանրային կյանքում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ծավալների մեծացումը չեն կարող չանդրադառնալ հանրային կառավարման որակի վրա: Այս առումով հանրային կառավարման համակարգում **նորաստեղծական ներուժի** ձևավորումը դառնում է դրա հաջող գործարկման գրավականը:

Հանրային կառավարման մարմինների ժամանակակից փոփոխություններին հարմար-

վողականությունը և նոր խնդիրների լուծման արդյունավետությունը ձեռք են բերվում անձնակազմի արհեստավարժության մակարդակի բարձրացման, բարձր արժեքներով օժտված փորձագետների ներգրավման միջոցով [14, էջ 353]:


Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ հանրային կառավարման ժամանակակից համակարգի կայացումը չի կարող չանդրադառնալ կառավարման մարմինների գործունեության և բովանդակության վրա: Հասարակությունների փոխակերպումների պարագայում անհրաժեշտ է հանրային կառավարման ժամանակակից տրամաբանությունը նաև հիմնել զարգացող բյուրոկրատական վարչակազմում հասարակության արժեքային բաղադրիչների ներկառուցման վրա:

Հանրային կառավարման նոր սերնդի բարեփոխումները հիմնված են այն արժեքների վրա, որոնցով հասարակությունը կառավարում է տնտեսական, սոցիալական և քաղաքական գործընթացները պետության, քաղաքացիական

հասարակության և մասնավոր հատվածի փոխգործակցության ապահովման միջոցով [11, էջ 2]:

Վերջին տարիներին բավականաչափ փոխվել են հանրային կառավարման բովանդակությունն ու դրա ընկալումը՝ կապված հանրային պահանջմունքների մեծացման, հասարակության տարբեր խմբերի միջև անհամաձայնությունների խորացման, հասարակական կառույցների բազմատեսականացման, տեղեկատվության հասանելիության, ռիսկերի մեծացման հետ: Ներկայումս աշխարհում ընթացող հանրային կառավարման լայնածավալ բարեփոխումները պայմանավորված են նաև ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ, ուղղված են պետականության հիմքերի ամրապնդմանը:

Սա է պատճառը, որ հանրային կառավարման նոր մոդելի փնտրտուքի մեջ հանրային կառավարման բոլոր բաղադրիչների միավորումը անխուսափելի է. /տե՛ս գծ. 1/:



Գծապատկեր 1. Ժամանակակից հանրային կառավարման մոդելի ձևավորման ընթացքը¹

Ամփոփելով՝ պետք է նշել, որ հանրային կառավարման հետագա զարգացումն ու կատարելագործումը ժողովրդավարական կայացած համակարգ ունեցող պետություններում պետք է միտված լինի անհատի, հասարակության, պետության շահերի հավասարակշռմանը, համամարդկային արժեքների պահպանմանը, նորաստեղծական ներուժի ներգրավմանը:

¹ Գծապատկերը կառուցվել է մեր կողմից: Հանրային կառավարման ձևավորման ընթացքը ընդգրկում է պետությունների ձևավորման, կայացման, զարգացման և պետական կառավարման տեսական հիմնադրույթների ներկայացման ամբողջ ընթացք՝ մինչև բուն հանրային կառավարման համակարգի ձևավորումը: Սրանց վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ, ուստի դրանք ներկայացված չեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աճեմօղլու Տ., Ռոբինսոն Չ. Ա.** Ինչու են ձախողվում պետությունները: – 685 էջ:
2. **Գենհարդ Բ. Ռոբերտ,** Հանրային կազմակերպության տեսություններ: – Եր.: Անտարես, 2006: – 314 էջ:
3. Հանրային քաղաքականության վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ / Խմբ.՝ Ա.Շ. Հարությունյան, Յու.Ս. Սուվարյան: – Եր.: «Պետական ծառայություն», 2005, – 319 էջ:
4. **Հարությունյան Հ. Մ.,** Հանրային ծառայության դերը հանրային կառավարման համակարգում, «Բանբեր» Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2015, 3(39), էջ 88-98:
5. **Սուվարյան Յու., Միրզոյան Վ.,** Հանրային կառավարման տեսություն և պատմություն: – Եր.: «Գիտություն», 2013, – 368 էջ:
6. **Арабаджийски Н.,** Сущность теории публичного управления.
<http://www.bagsurb.ru/about/journal/ekonomika-i-upravlenie-nauchno-prakticheskiy-zhurnal-2-2012/ARABADJIISKIY.pdf>
7. **Вебер М.,** Избранные произведения /Пер. с нем., Сост., общ. ред. и послесл. Ю.Н. Давыдова. – М.: Прогресс 1990, 808 с.
8. Классики теории государственного управления: американская школа / под ред. Дж. Шафритца и А. Хайда. – М., Изд-во МГУ, 2003, 800 с.:
9. **Оболонский А. В.,** Государственная служба (комплексный подход), Учебное пособие. 2-е изд. – М.: Дело, 2000, 440 с.:
10. **Осборн Д., Пластрик П.,** Управление без бюрократов: пять стратегий обновления государства /Пер. Э. Загашвили, Л. Лопатникова, общ. ред. и вступ. ст. Л. Лопатникова. – М.: Прогресс, 2001. – 536 с.
11. **Cheema G.S.,** From public administration to governance: the paradigm shift in the link between government and citizens / 6th Global Forum on Reinventing Government Towards Participatory and Transparent Governance (24-27 May 2005, Seoul, Republic of Korea), p.2.
<http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un/unpan020731.pdf>
12. **Christensen T., Lægreid P.,** New Public Management: The transformation of ideas and practice. Aldershot, UK: Ashgate, 2002, – 353 p.
13. **Kettl D.F.** The Politics of the administrative process. – Washington, DC: SAGE publications, 2012. – 612 p.
14. Reconceptualizing Governance, Discussion Paper 2 / The United Nations. - New York: United Nations Development Programme, 1997, 93 p.:
15. **Rosenbloom D.H.,** Public Administration: Understanding Management, Politics and Law in the Public Sector. 4th ed. - New York: McGraw-Hill, 1998, 489p.:
16. **Weber M.,** Politics as a Vocation / գերմ. Politik als Beruf/, 1919:
17. **Wilson W.,**The Study of Administration // Political Science Quarterly, 1887, Vol. 2 (June),
18. **Waldo D.,** The Administrative State: A Study of the Political Theory of American Public Administration, The Ronald Press Company, New York, 1948.

Տճանա/Հանձնվել է 24.10.2021

Քեցենզիրօվանա/Գրախոսվել է 08.11.2021

Քրինյա/Ընդունվել է 15.11.2021